Հավելված N 1
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/12» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԴԻՄՈՒՄՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
գնանշման հարցմանը մասնակցելու

«ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/12» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 15-17 չափաբաժիններին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:
«ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է Հայաստանի հանրապետության ռեզիդենտ:
«ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ -ի՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 00224917;
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ info@comp.am;
- գործունեության հասցեն է՝ ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղ, 33/1 շենք, 69 տարածք;
- հեռախոսահամարն է՝ 091-403647;

Սույնով «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ -ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/12» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.

2) «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/12» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ -ին փոխկապակցված անձանց և (կամ) «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ -ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ –ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:
- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ) և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

Անունը Ազգանունը Հայրանունը	ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը	Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը
Շուշանիկ Ջուլհակյան Գագիկի	անձնագիր AR0378166	

Կից ներկայացվում է «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 1.1-ի:

«ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ տնօրեն Գագիկ Ջուլհակյան

Կ. Տ

Digitally signed by JULHAKYAN GAGIK 2008550583
Date: 2021.09.08 00:19:59 MSK